Հովհաննես Թումանյան

Սուտլիկ որսկանը

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, թրով թվանքով որսի գնացինք: Հադին էր, Հյուդին էր, Չատին էր, Մատին էր, հերս էր, ես էի . գնացինք որսի . . .

Սարեր, ձորեր դուզ գնացինք, որտեղ որս կար՝ սուսուփուս գնացինք, որտեղ ահ էր՝ կուզեկուզ գնացինք . . .

Գնացի՜նք, գնացի՜նք, շատ թե քիչ, մին էլ տեսնենք երեք լիճ . երկուսը՝ ցամաք, մնի մեջ էլ իսկի ջուր չկա: Մին էլ, ըհը՛, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում են, ճչում երեք հատ սիպտակ բադ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի:

Հադի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

Թե՝ թվանք չունեմ:

Հյուդի՛, տո՛ւր հա, տո՛ւր:

Ես էլ չունեմ:

Չատի . . . Մատի . . .

Մենք էլ չունենք:

Բա ի՞նչ անենք . . .

Հորս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար . երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրա՞ք, որ կրակեց . . . Նա կրակեց, ես զարկեցի . որ զարկեցի՝ փռվեց էսպես, ամեն թևը հինգ գազ ու կես . . .

Հադի, դանա՞կ . . .

Թե՝ դանակ չունեմ:

Հյուդի, դու . . .

— Ես էլ չունեմ . . . - Չատի՞, Մատի՞ . . .

- Մենք էլ չունենք:

- Բա ի՞նչ անենք . . .

Հերս էլ ունի, բերան չունի:

Էս անբերան դանակը քաշեցինք: Հադին մորթեց, չկարաց . Հյուդին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ես քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի, բադ մի ասիլ, մի գոմեշ ասա: Հադին շալակեց, չկարաց, Հյուդին շալակեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ես շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսնենք երեք գեղ, երկուսի տեղն իսկի չի երևում, մնումն էլ իսկի շենլիկ չկա: Էս անշեն գեղում դես ման եկանք, դեն ման եկանք, մի տուն գտանք, մեջը՝ երեք պառավ, երկուսը՝ մեռած, մնի բերնումն էլ շունչ չկա:

- Տղերք,- ասինք,- եկեք բադով փլավ անենք:

Էս անշունչ պառավը գնաց դես ման եկավ, դեն ման եկավ, կես բրինձ գտավ, երեք պղինձ, երկուսը՝ ծակ, մինն էլ իսկի տակ չունի:

Ջուրը լցրինք էս անտակ պղինձը, մեջը ածինք բադն ու բրինձը, անկրակ եփեցինք: Եփեց, եփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը:

Որսից եկած սոված մարդի՛կ, վրա եկանք, կերա՛նք, կերա՛նք . ոչ աչքերս բան տեսավ, ոչ բերաններս բան մտավ: